և զՊէմունդ բրինձն արգել 'ի բերդն Սսոյ, և 'ի տեղի նորա կացոյց բրինձ Անտիոքու՝ զՌուբէն թոռն եղբօր իւրոյ: Սա բարեբարոյ և ողորմած կացեալ յիշխանութեան ամս Լ.Զ.: Եւ բազում դրուատեօք գովեալ փախճանեցաւ 'ի ՈԿԸ. թուին:

Փիլիպ՝ փեսայ Լևոնի՝ և որդի Բրինձին Անտիոքու. քանզի Լևոնի որդի ոչ գո-լոյ՝ զսա եղին թագաւոր գրաւեալ երդ-մամբ, զի պահեսցէ զօրէնս Հայոց: Եւ ընդ ակամբ հայրին նորա առ իշխանն Հայոց, կալան զնա և եղին յարգելանս, և սպանաւ 'ի զօրաց իւրոց. իշխեաց ամս Գ.:

Հեթում՝ որդի Կոստանդին Պարոնի՝ և ազգական Լևոնի՝ էառ զՍաբել դուս-տրն Լևոնի, որ էր կին Փիլիպին: Զսա օծին թագաւոր Հայոց: Էառ զՄարաշ և զՊէանի. շինեաց զԿաթուղիկէն սուրբ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան